ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Իսահակյանի քնարերգությունը սիրային նամակների ուղեկցությամբ

Հետազոտող ուսուցիչ՝ Տանյա Գրիգորյան

Երևանի Աշոտ Մանուկյանի անվան հ.93 միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Գլուխ 1. Իսահակյանը սիրո երգիչ 4
Գլուխ 2. Իսահակյանի սիրո երգերի հերոսուհիները նրա նամակներում 6
Եզրակացություն 16
Օգտագործված գրականության ցանկ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իսահակյանը դասական գրականության բացառիկ այն ներկայացուցիչներից մեկն է, որոնք մարմնավորում են իրենց ծնող ժողովրդի հավաքական իմաստնությունն ու ստեղծագործական հանճարը, վսեմագույն տենչերն ու երազանքները։

Անհունորեն սիրած իր ժողովրդի զգացմունքների թարգմանն էր նա, վսեմի, բարու և գեղեցիկի պատգամախոս-բանաստեղծը, հայրենասիրության և մարդկայնության ջահակիրը։

Իր հմայիչ քնարով նա երգեց ժողովրդի սերն ու կարոտը, վիշտն ու տառապանքը, «բյուր-բյուր ճամփեքով» ճշմարտությունն ու իր արյունաքամ հայրենիքի փրկությունը որոնեց։

Ավետիք Իսահակյանի բանաստեղծական ներշնչանքների մեջ կան մի քանի բարձրակետեր՝ Սերը, Մայրը, Հայրենիքը, բանաստեղծի ըմբռնումով գոյության այուները, որոնց համար նա տեղ բացեց «Երգեր ու վերքեր»-ի առաջին իսկ էջերում և մինչև կյանքի մայրամուտը, մինչև սրտի վերջին զարկը մնաց այդ բարձունքներում։

Իսահակյանը մեծ սիրերգակ է այս հասկացության ամենալայն իմաստով։ Այդպիսին լինելու համար պետք էր լինել մեծ սիրահար, ինչպիսին ինքն էր։ Եվ իր մասին նա կարող էր ասել Նահապետ Քուչակի պես . «Երբ սէրն ի յաշխարհս եկաւ, եկաւ իմ սիրտս բնակեցաւ, հապա յիմ սրտէս ի դուրս՝ յերկրէ յերկիր թափեցաւ…»։

«Երգեր ու վերքեր»-ի սիրավառ հեղինակը բոցավառեց սիրո հզոր մի խարույկ՝ բերելով սիրային ապրումի կենդանի , հզոր շունչը։

ԳԼՈՒԽ 1. ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ՍԻՐՈ ԵՐԳԻՉ

Գրականության պատմության մեջ հազվադեպ է լինում, որ գրողը իր առաջին իսկ գրքով ժողովրդականություն է ձեռք բերում: Այդպիսի բախտի արժանացավ Իսահակյանը իր «Երգեր ու վերքեր» գրքով:

Իսահակյանի քնարերգության հմայքի գաղտնիքը նրա երգերի սրտագրավ հուզականության, անմիջականության, ժողովրդական ոգու ու ոճի գեղեցիկ ներդաշնակության, պատկերավոր և կենդանի խոսքի մեջ էր:

Ետմիջնադարյան հայ բանաստեղծության մեջ մինչ «Երգեր ու վերքեր»-ը չկային ամեն տեսակի պայմանականություններից վեր կանգնած, բարձր շիկացման հասած այնպիսի սիրային բռնկումներ, ինչպիսիք են Իսահակյանի սիրային հանդուգն խոստովանությունները:

Զգացմունքի ծայրաստիճան անկեղծությունը, անմիջականությունը, բնականությունը Իսահակյանի քնարի ոչ միայն ցայտուն յուրահատկություններն են, այլև նրա մեծ ուժը, որի շնորհիվ կլանում է մեզ միանգամից, իսկույն արձագանք գտնում մեր սրտերում: Իսահակյանի երգերը թվում են զգացմունքի անմիջական մարմնավորումներ, վերին աստիճանի պարզ ու անարվեստ, բանաստեղծի ողջ էությունը կլանած զգացմունքի ուժից ծնված; « Նա գրում էր ոչ թե բանաստեղծություններ գրած լինելու համար,- Իսահակյանի մասին ասել է Դ. Դեմիրճյանը 1940 թ. ,- այլ իրեն տանջող մտքերին և զգացմունքներին ելք որոնելու համար: Պետք էր անջատվել ներքին ճնշումից, հոգեկան բեռից»:

Բանաստեղծական խոսքի անմիջականության և բնականության պահանջը Իսահակյանի համար գեղագիտական սկզբունք էր, որը նա ասույթներից մեկում արտահայտել է կարճ և դիպուկ բանաձևով. «Արվեստի հոգին անկեղծությունն է»: Իսկ իր հիշատակարանի գրառումներից մեկում դեռ 1900 թ. նա այդ միտքը բացատրել ու հիմնավորել է այսպես. « Սիրտը զգում է, իսկ երգը հայտնում է աշխարհին սրտի զգացածը- սա է պոեզիան, էլ ուրիշ ո՛չ մի բան… Զգացմունքն է պոեզիան…» :

Իսահակյանի պոեզիայի և գեղագիտության այս հատկանիշը, իրարից անկախ, բայց բավական միահամուռ նշել են ժամանակակիցներից նրանք, ովքեր առավել խորն են թափանցել նրա էության մեջ։ Եվ մանավանդ՝ բանաստեղծները։ Օրինակ՝ Վ. Տերյանը 1906 թ. մի նամակում այսպես էր ներկայացնում իր ավագ գրչակցին. «Ավետիքը անմիջական զգացմունքի և տրամադրության մարդ է, և իզուր կլիներ նրա մեջ որոնել փիլիսոփայական մտքի որոշ սիստեմատիկական ուղղություն։ Նրա բանաստեղծություններն էլ անմիջական զգացմունքի արտադրություններ են»։ Իսկ երկու տարի անց հենց իրեն՝ Ավ. Իսահակյանին գրած նամակում Տերյանը նրա տաղանդի էությունը բնութագրում էր ընդամենը երեք բառով, որոնք, սակայն, շատ մեծ կշիռ ունեն. «Զգացմունքի տարերային անմիջականությունը քո մուսայի սքանչելի հատկություններից մեկն է»։

Եթե քնարերգությունը առհասարակ խոսքարվեստի ամենասուբյեկտիվ սեռն է, քանի որ աշխարհը դիտում և ներկայացնում է անհատի ընկալումների միջոցով, ապա Իսահակյանի լիրիկայի մասին կարելի է ասել, որ այն գերսուբյեկտիվ է։ Այստեղ ամեն ինչ ենթարկված է անհատի հուզաշխարհի բացահայտմանը, առարկայական աշխարհի նկարագրությունները դառնում են քնարական հերոսի հույզերի ու մտորումների յուրատեսակ հայելին, գունավորվում են նրա տրամադրության և վերաբերմունքի վառ գույներով։

ԳԼՈՒԽ 2. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԻՐՈ ԵՐԳԵՐԻ ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԸ ՆՐԱ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

Իսկ ով է Իսահակյանի քնարական հերոսը: Ասում են, որ ամեն մի բանաստեղծություն նախ և առաջ ինքնակենսագրություն է, որ բանաստեղծը բացում է իր անձնական կյանքի էջերը՝ դրանք բարձրացնելով համընդհանուր ապրումների աստիճանի: Իսահակյանի երգերն էլ, երբ մանավանդ դրանք կարդում ենք ժամանակագրական կարգով, իրոք դառնում են մի յուրատեսակ քնարական օրագիր, որում հեղինակն ասես ուղղակի գրի է առել իր խոհերի ու ապրումների, կյանքում ստացած անհամար վերքերի պատմությունը: Հենց այս պատճառով էլ Իսահակյանի քնարերգության մեջ շատ հաճախ նրա քնարական հերոսի և հեղինակի կերպարները այնքան են մերձենում և նույնանում, որ կատարյալ միաձուլման զգացողություն են առաջացնում: Իսահակյանի քնարական հերոսի կենսական անմիջականությունը պայմանավորված է նրա բանաստեղծություններում այն կանանց անունների հիշատակությամբ, որոնք նրա սիրո « ցնորքների ու մորմոքների» անմիջական ազդակներն են եղել:

Շուշան կամ Զարո անուններն Իսահակյանի հուզաթաթավ երգերի շնորհիվ դարձել են կանացի գեղեցկության և հմայքի խորհրդանիշներ, սիրո խորհրդանիշներ: Բայց բանաստեղծի կենսագրությունից մենք լավ գիտենք, որ դրանք սոսկ գեղարվեստական կերպարներ չեն, այլ իրական կանայք, որոնք ճակատագրական դեր են խաղացել նրա կյանքի և ստեղծագործության համար: Դրա վկայություններն են Շուշանիկ և Աննա Մատակյաններին ուղղված սիրավառ նամակները՝ մեկը մեկից կրակված,ինքնամոռաց և անմիջական: Եվ թերևս բնական է , որ Իսահակյանի քնարական հերոսը ի լուր աշխարհի հայտարարում է ոչ միայն իր սիրո տառապանքների, այլև դրանց կոնկրետ « հանցավորների» մասին՝ ներբողելով կամ մեղադրելով, հանդիմանելով կամ աղերսելով, հաճախ էլ աստվածացնելով կամ անիծելով նրանց:

« Շուշան աղջիկ , քու գերին եմ, կալ ու կապված անշղթա» , « Շուշան յարս ինձի թողել՝ Էն տղի հետ ու՞ր կերթա», «… Ու սրտով սիրած Շուշանս լինի, Օջախիս

կողքին գուրգուրենք իրար», « Ձեր տան առաջ՝ ձյուն ու գիշեր, ա՜խ, ես կանգնել , կըդողամ…» , « Գիշեր-ցերեկ զրկված քնից, ծով է կտրում աչքս ճամփին…» , « Ա՜խ, իմ կյանքս, անուշ կյանքս, կտոր-կտոր փշրվեց» և նման այլ հուզախռով խոստովանություններ անում էր մեկը, որի անձնական աշխարհը երազներով ու տառապանքով , հավատով ու փլուզումներով լեցուն դրաման էր։ Անհատի, որը մեծ աշխարհ էր եկել սրտի մեջ գտնելու ներդաշնակություն և անապակ, մաքուր սիրո իդեալը, բայց կյանքը նրա համար պահել էր միայն փշեր, վերքեր, վշտի հեղեղներ…

Եվ որպեսզի բացահայտենք Իսահակյանի սիրերգության կենսական ակունքները, ուսումնասիրենք այն նրա սիրային նամակների ուղեկցությամբ։

Իսահակյանի բանաստեղծական աշխարհում սերը անձնական, արյան մեջ մտած ամենախոր զգացմունքն է , որը նա ճաշակեց դեռ վաղ պատանեկան հասակից, և որը եղավ նրա ողջ կյանքի ուղեկիցը։ Իսահակյանի համար սերը կյանքն է իր բովանդակ գեղեցկությամբ, իր բոլոր հմայքներով ու հրապույրներով. սերն է բնության և կյանքի արարիչը։ Ավելին, բանաստեղծի հոգին է, էությունը, բանաստեղծի կյանքը.

Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,
Իմ մեջ երկինքն է երգում.
Բռնկում է սիրո հրդեհն,
Վշտի հեղեղն աղմկում…
….
Եթե սիրուս վառ հրդեհից
Մի նսեմ կայծ, սևաչյա՛,
Վառ սրտումըդ միայն շողա,-
Բուռն հույզերով կայրվիս։

Կամ՝
Սիրտըս երկինք է…
Ամեն արարած
Աստղ ունի այնտեղ-
Գահ ունի այնտեղ։

Սիրտըս երկինք է …
Բու՛յր կուտա ծաղկին,
Սեր կուտա անկյանք,
Չոր անապատին-
Ամայի սրտին…
-Սիրտըս երկինք է…

Բանաստեղծը աստվածացնում է Սերը, պատրաստ է ցանկացած անձնազոհության, նվիրումի.

Կուզե՞ս լինիմ վշտի ցողեր՝
Աչերիդ մեջ շող ցայեմ.
Լուռ գիշերվա անուշ հովեր՝
Փունջ ծամերդ փայփայեմ։

…

Ինչ-որ ցանկաս՝ կուզե՞ս լինիմ,
Լինիմ երկինք ու երկիր,
Լինիմ ծո՛վ, ժայռ, արև, լուսին,
Միա՛յն, միա՛յն ինձ սիրի՛ր…

Մեկ այլ բանաստեղծության մեջ Իսահակյանն ասում է.

Հոգի կուտամ, հոգի տու՛ր ինձ,
Իմ նազելի աչագեղ։
Սիրտս –սև արտ, սերդ- ալ վարդ,
Թո՛ղ բողբոջի նա այնտեղ.
Սիրտըս- գիշեր, սերդ- վառ աստղ,
Թո՛ղ շողշողա նա այնտեղ…

Եվ ահա Աննա Մատակյանին ուղղված նամակում կարդում ենք. «…Ասա՛, ի՞նչ կարող է անել սիրող սիրտը, ինչի՞ առաջ կանգ առնի սիրող սիրտը. ես անկարելին կարելի կդարձնեմ քեզ համար. ես քառասուն գլխանի դևին կսպանեմ քեզ համար. ես անմահության խնձորը կբերեմ քեզ համար. ես արևը, աստղերը, ամբողջ աշխարհը կնվիրեմ քեզ. ուրիշ ի՞նչ ես ուզում…»։

Կամ մեկ այլ նամակում. « Իմ անգի՛ն, իմ պայծա՛ռ Աննիկ ջան, իմ ընկե՛ր, իմ մաքուր սե՛ր- ասա, ի՛նչ որ կուզես՝ ես կատարեմ քեզ համար. ամենադժվարին բաները, անկարելի բաները. մեռնել քու երազների համար. դու իմ շքե՛ղ, իմ զուլա՛լ երազ…Եղիր միշտ այդպես լա՛վ, այդպես մաքուր, այդպես կուսական. թող ոչ ոքի շունչը չդիպնի քեզ, ոչ ոքի ձեռքը չհասնի քեզ- և իմ, և իմ, դու երկինք եղիր իմ հոգու համար՝ ձգտեմ, թռնեմ քեզ և մեռնեմ քու կապույտ, քու լազուր, քու ջինջ հոգում։ Սիրիր ինձ, քու անձնվեր Ավետիքին»։

Այլ նամակներում Իսահակյանը տենչում է նվիրական, աստվածային սեր. « Ես ուզում եմ տիեզերական, անհուն սեր, որ ամբողջ տիեզերքի և միլիոնավոր մարդկանց մեջ միայն ինձ վերա հենվեր, ինձ հավատար և ապրեր ու մեռներ հանուն ինձ , և քանի որ դրա համար ուժ չունիս, դու չես կարող իմ երկինքը տեսնել և իմ հոգում սավառնել…»։

Ապա բանաստեղծը շարունակում է. «…Սիրիր ինձ աստվածներին վայել սիրով, պահիր ինձ քո հոգում , իմ լավ Աննիկ, և մղիր ինձ դեպի ճշմարտություն, դեպի բարձունքները, դեպի կատարելություն»։

Մեկ այլ նամակում Իսահակյանը շարունակում է վերերկրային սիրո թեման. « Երանի նրան, ով ձգտում է դեպի աստղերը, երանի նրան , ով սիրում է և չի հասնում, ով միշտ թափառում է ու չի գտնում: Աննիկ ջան, հոգի ջան, ես տեսնում եմ, որ հոգիս շատ է վիրավորված, և որ քեզ շատ մեծ վիշտ պետք է պատճառե.մեր սերը թող մերը լինի ոչ այս աշխարհից. հողեղեն չլինի.սիրենք իրար հեռավոր աստղերի պես. իրարուց հեռու՛՛ , իրար սրտի մեջ…»:

Սերը կյանքի և բնության հրաշալիքներին հավասարեցնող, սիրո առջև այսպես խոնարհաբար ծնրադրող բանաստեղծը, սակայն, չէր կարող չնկատել նաև այդ մեծ զգացմունքի աղավաղումները, մտերմական հարաբերությունների մեջ թափանցած անմարդկային կրքերը, նյութապաշտությունն ու բարքերի կոպտությունը: Չէ՞ որ այդ դառնագին ապրումները բանաստեղծը ապրել և վերապրել էր բազմիցս, կրկին ու կրկին, և նրա նամակները բառացիորեն հեղեղված են հուսահատությամբ, հիասթափությամբ, հոգեկան անփարատելի վշտերով ու վերքերով «լայնաբերան»: Այդպիսի վշտի հեղեղ է հորդում իր՝ թերևս ամենատառապագին սիրուն՝ Շուշանիկ Մատակյանին ուղղված նամակում. « Նորից վեր եմ առնում գրիչս, թաթախում եմ հիվանդ, արյունոտված սրտիս մեջ և գրում եմ քեզ, Շուշիկ, մի քանի տող, գրում եմ ես՝ Ավետիք Իսահակյանս:

Ինչու՞ եմ գրում, ի՞նչ է ստիպում ինձ գրել.-սիրել- ես քեզ չեմ սիրում, ատել- ես քեզ չեմ ատում. բայց դու իմ հոգում կաս՝ որպես մի ծանր երազ, որպես մի դժբախտություն, մի կոշմար. ես ուզում եմ քեզ հոշոտել, ես ուզում եմ քեզ հազար-հազար անգամ սպանել, սպանել, նորից սպանել, կենդանացնել՝ նորից սպանել. հավիտյան ապրել և քեզ հավիտյան սպանել, բայց այդ չեմ կարող անել, ամբողջ էությունս բարի է … և որ ամենաողբալին է՝ ես դեռ քու ճիրաններում եմ. ի՞նչ անեմ, ինչպե՞ս ազատվեմ. երբեմն քեզ ատում եմ ծովաչափ, ծովաչափ, և երբեմն սիրում եմ ու պատրաստ ոտքերդ համբուրելու, բայց որ հիշում եմ անցյալը, ես մրրիկ եմ դառնում:

Ես գրում եմ համարյա կիսախելագար, և մինչև մահս քեզ էլ ո՛չ մի տող գրելու չեմ, և աչերիդ նայելու չեմ, Աստվա՛ծ է վկա. վերջին անգամ պիտի լամ քու առաջ և հայհոյեմ քեզ, հայհոյեմ,- հայհոյեմ քու բոլոր սրբությունները, որովհետև դու իմ

սրբությունները պղծեցիր, որովհետև իմ ամենանվիրական սերս շան պես դուրս վռնդեցիր, որովհետև դու ինձ չարչարեցիր, նահատակեցիր՝ անսահմանորեն։

Դու գիտեիր իմ դժոխային տանջանքներս, բայց մոտ չեկար,մի անուշ խոսք չասիր… և քեզ հայհոյեցի աշխարհքի ամենածանր հայհոյանքով, որ իմ կյանքում մի անգամ եմ ասել, և այն էլ քեզ, իմ հոգուն, իմ իդեալին. այժմ մազերս փետանում են և ամաչում եմ, և սոսկում եմ այդ հայհոյանքից…Եվ այն օրից, երբ գրեցի…

Շուշիկ, ատելի, սիրելի Շուշիկ, ուրիշ կերպ ես չէի կարող վարվել. ես պիտի քեզ անպատվեի, վայր գցեի, որ կարողանայի ազատվել այդ հրեշային սիրուց , որ ինձ ծծեց, կամ սպանեի ինձ. սպանել չուզեցա, որովհետև բնությունը իմ մեջ շա՜տ է կյանք և կյանքի ուժ ու սեր դրել, բայց հայհոյել կարողացա. իհարկե, ավելի լավ էր մեռնեի, քան հասնեի այն օրին, որ իմ դարեր,դարեր պաշտած երազը սրբապղծեի, ոտաց տակ տայի…

Բայց լալիս եմ հիմա , և սրտիցս արյուն է կաթում.գնա՛ , Շուշիկ, Աստված քեզ հետ, ինձ մի՛ անիծիր , իմ անունս երբեք, երբեք մի՛ հիշիր և ոչ մի տեղ, և ոչ մի տեղ, ոչ մի մարդու մոտ. աղաչում եմ քեզ. ինձ թաղիր քեզ համար հավիտյան։

Աղաչում եմ քեզ…

Ես էլ կվարվեմ քեզ հետ այդպես։

Դու ինձ համար մեռա՛ր, մեռա՛ր…

Արտասվելով համբուրում եմ *քու գերեզմանը*

Եվ ճամփա ընկնում

Նոր Աստված գտնելու…

Ավետիք։

Իսկ այդ նոր Աստվածը (չգիտես բախտի չար խաղ էր, թե ճակատագրի հեգնանք) ոչ այլ ոք էր, քան Շուշանիկ Մատակյանի քույրը՝ Աննա Մատակյանը։ Եվ պատմությունը, ցավոք, կրկնվում է։ Նախ դառը խոստովանություն . «Թանկագին Աննի՛կ, ես չեմ ուզում ասել ա՛յն, ինչ որ գուցե դու չգիտես կամ շատ քիչ գիտես,- դա ա՛յն է , որ ձերոնք ինձ չեն սիրում և այն նրա համար, որ ե՛ս աստվածային , տիեզերական սիրով սիրել եմ, պաշտել եմ ձերոնցից մեկին, որի համար այնքան տանջվել եմ ու լացել, որ դեռ արցունքս չի չորացել սրտիս մեջ»։

Դժվար չէ կռահել, որ այս սերն էլ է դատապարտված. « Դու մեղավոր չես, որ Ձերոնք իմ լուսեղեն սիրտս տրորեցին իրենց ոտների տակ…»»

Հաջորդում է հույսը. «Դու լուրջ հոգի ունես, տանջվում ես, ըմբոստ ես, չես ենթարկվում շրջապատի ճահիճի օրենքներին, որ դու բանաստեղծական տրամադրություն ունիս, որ քո հոգին բանաստեղծ է, որ քու սրտում ապրում է ու բուրում ու շողշողում մի նվիրական պոեզիա…Բա՛ց, Աննի՛կ ջան, քու երկնային սիրտը իմ տանջված հոգու առաջ. ես սրբության պես կմոտենամ քու հոգու տաճարին, կերկրպագեմ և կյա՛նքս, կյա՛նքս չեմ խնայի քեզ- լինիս դու՛ պայծա՛ռ, արշալու՛յս, մաքու՛ր, խո՛րն ու վսե՛մ՝ այդպե՛ս լինիս դու…

Հավատա դու ինձ…»։

Սակայն նյութապաշտ միջավայրը անկարող է բանաստեղծական վսեմ սերը հասկանալ և գնահատել. «Աստված թող դատե այն չար մարդկանց, որոնք ընկան մեր սրտերի միջև և խավար ու ցուրտ տարածեցին մեր մեջ…»։

Բայց սա դեռ ամենը չէ. բանաստեղծին հալածում ու ոտնահարում են. «Դու թույլ ես տալիս, որ նրանք զցեն ինձ իրենց սմբակների ու թաթերի տակ ու տրորեն, և դու ինձ չպաշտպանես… Ուրեմն քո մեջ սերը զորեղ չէ, միահեծան, անխորտակելի չէ և ու՞ր մնաց , որ աստվածային լինի…»։

Եվ բանաստեղծը դառնացած եզրակացնում է . « Դու չար սիրտ ունես Շուշիկի պես. նա ինձ անսահմանորեն տանջեց… Հիմա էլ դու ճիշտ և ճիշտ նույն խաղն ես խաղում ինձ հետ…Փոխանակ իմ ծովածավալ սերը պաշտելու և երկրպագելու ինձ, դու ջղային խաղ ես դարձնում մեր զգացմունքները։ Իմ սերը, իմ երազները…Այդ քու հասկացողությունից բարձր է և անմատչելի. քու մեջ իմ սիրո ոչ միայն մի հազարերորդը, այլև ստվերը չկա. դու չգիտես սիրել. քու սերը սուտ է ու թույն է…»։

Բանաստեղծին մնում է դառնագին ողբալ իր ճակատագիրը. «Վերք կա իմ մեջ, խո՛ր, լայնաբերա՛ն, լայնաբերա՛ն, և էլի չի գոցվում նա, և էլի արյունս ծորում է , թափվում է. դու չես տեսնում դա, չես զգում… բայց կարող ես և չես ուզում բուժել, գուրգուրել ինձ…»։

Եվ, իհարկե, ցավագին խզումն անխուսափելի էր. «Ինչպես իմ կույր բախտն է, չար աստղս և դաժան ճակատագիրս, որ մի անգամ ճակատս պատռվեց ձեր

անմարդասեր դռան շեմքին, և տարիներ հետո նորից եկա ու ճակատս խփեցի ձեր նզովված դռանը… Անիծում եմ ինձ , որ նորից ձեր դուռը եկա ու արյունվելով ետ եմ դառնում…»։

Այսպես ահա իր դրամատիկ վախճանին է հասնում և այս սիրավեպը։ Բայց հենց նման սիրավեպերից էլ սկիզբ են առնում բազում սիրավառ, սրտամորմոք երգերը։

***

Զառ հույսերով, անմահ սիրով
Ես քեզ խորունկ սիրեցի.
Աստղ ու երկինք- սերս ու սիրտս,
Ոտներիդ տակ փռեցի.
Սեր չընտվիր, ու աշխարհեն
Սիրտըս կընտրավ, Շուշա՛ն ջա՛ն,
Ա՜խ, զմրուխտե, ա՜խ, զմրուխտե
Իմ հույսե՜րըս, իմ սերըս…

***

Ու սրտով սիրած Շուշանս լինի,
Օջախիս կողքին գուրգուրենք իրար.-
Արազի ափին բոստանս լինի,
Ծով-քրտինք թափեմ Շուշիկիս համար։

Տարիներ հետո քեզ տեսա նորից,
Սիրտըս արտասվեց, բայց ժպտացի ես,
Նույն աղջիկն էիր՝ չքնաղ բոլորից,
Հոգուս մտերիմ, հարազատ այնպե՛ս։

…

Սուտ է , նազելիս, չի զատել երբեք,

Երբեք չի զատել մեզ կյանքը դաժան.

Քու՛յր իմ, ամոքիր սիրտըս վշտաբեկ,

Տե՛ս, քոնն եմ ես միշտ, քո՛նն եմ հավիտյան։

***

Երկինք-գետինք գլխուս մթնան,

Անտուն- անտեր կուլամ ես.

Յարիս տարա՛ն- ջանիս տարա՛ն,

Հոնգու՛ր-հոնգու՛ր կուլամ ես…

Ա՛խ, յարս ինձի հանեց սըրտեն,

Անճար թողեց ու գընաց.

Սըրտիս սավդեն- խորունկ յարեն

Անդեղ թողեց ու գընաց։

***

Ա՛խ, ալ- վարդի, սիրո վարդի

Չոր փշեը մնացին…

Էն փշերը մատաղ սիրտըս

Քրքրեցին ու կերա՛ն.

Կարմիր-կանաչ իմ օրերըս

Սիրո սգով սևացան…

Ա՛խ, ափսո՛ս իմ գարուն կյանքիս

Սու՛ր փշերը մընացին…

***

Սիրեցի, յարըս տարան.

Յարա տվին ու տարան.

-Էս ի՛նչ զուլում աշխարհ է,

Սիրտս պոկեցին, տարան։

***

Ավա՜ղ, լուսնի տակ և վեհ բան չը կա,
Ամեն ի՛նչ կոպիտ, բիրտ, անասնական.
Աննյութ, անմարմին, անկիրք սեր չը կա,
Ա՜խ, մաքուր սերը երազ է միայն։

Ես շա՜տ եմ լացել սուրբ սիրու համար
Եվ ես լավ գիտեմ գինը ամենքի-
Սերն է անկումը մեր աստվածության,
Շըրջմոլիկ հուրը կրքերի ճահճի։

***

Մեկը չեղավ, որ իմանար վշտերս,
Քնքուշ ձեռքով դարման աներ վերքերիս.
Մեկը չեղավ, որ գուրգուրեր վարդերս,
Անուշ բույր տար, վարդի գույն տար երգերիս։

Կյանքս կտամ սրտից բխած համբույրին,
Ա՜խ, թե մեկը ինձ հասկանա՜ր ու սիրե՜ր։
Ի՞նչ կա երկրում և՛ սրբազան, և՛ անգին,
Քան թե զոհվել, քան թե լինել անձնվեր։

Բայց ես կյանքում շա՜տ սիրեցի ու լացի,-
Մեկը չեղավ, որ ամոքեր վշտերս,
Սիրող սրտի ծարավ, ծարավ մնացի,
Մեկը չեղավ, որ գուրգուրեր վարդերս…

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դժվար է պատկերացնել՝ ինչ կլիներ, եթե Իսահակյանի կյանքում չլինեին իր մեծ Սերերը, ինչպիսին էին Շուշանիկ և Աննա Մատակյանները; Գուցե չունենայինք սիրո երգերի իսահակյանական շքեղ ծաղկեփունջը։ Բայց ո՛չ, մեծ Սիրահարն ու մեծ Սիրերգակը չէր կարող իր բանաստեղծական ներշնչանքը չունենալ, չէր կարող առանց աստվածային սիրո ապրել ու արարել։

Եվ այսպես, Ավետիք Իսահակյանը, սնվելով իր հոգու երազանքներից ու տառապանքներից, վառեց սիրային ապրումի կենդանի, անմարելի բոցը, որով էլ վառել, վառում է ու դեռ վառելու է սիրավառ սրտերը։ Սիրային նամակներում բացահայտելով Իսահակյանի սիրերգության կենսական ակունքները՝ նոր լույսի տակ է երևում նրա երգերի ներշնչանքի աղբյուրը։

Իսահակյանի դավանանքով կյանքի հիմքը սերն է, և իր սիրո երգերով գալիս էր հաստատելու անապական, մաքուր սիրո իդեալը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավ. Իսահակյան Երկերի ժողովածու վեց հատորով,հատոր վեցերորդ, Երևան 1979
2. Ավ. Իսահակյան. Երկեր չորս հատորով, հատոր առաջին, Երևան 1958
3. Էդ. Ջրբաշյան «Չորս գագաթ», Երևան 1982
4. Ս. Աղաբաբյան «Դեպի աղբյուրը լույսի», Երևան 1979